Գ. Բալայեանը և Լ. Զարաֆեանը: Սկսեցին բանակցութիւններ Մաք Մեգենի, դր. Սուլթանովի և երկու հայ ներկայացուցիչների միջև: Մաք Մեգենը առաջարկեց Բաքուից եկած հայ ներկայացուցիչներին ստորագրել մի յայտարարութիւն, որ Ղարաբաղը մինչև Զաբուղ ժամանակաւորապէս յանձնւում է Ադրբէջանին: Պատասխանը եղաւ կտրուկ մերժում: Այն ժամանակ Մաք Մեգենը դրահապատ ինքնաշարժ նստեցրեց Գ.Բալայեանին ու Լ. Զարաֆեանին և հեռացրեց Ղարաբաղից: Հայ ազգաբնակութիւնը վրդովւած՝ փակեց խանութները և բողոքի ցոյց արաւ անգլիական ներկայացուցչութեան առջև:

Անգլիացիների բոլոր ջանքերն անցան ապարդիւն. ղարաբաղցիները մերժեցին ճանաչել դր. Սուլթանովի իշխանութիւնը:

Ի պատասխան Հայաստանի կառավարութեան բողոքների և ղարաբաղցիների հակառակութեան, Բաքուի անգլիական զօրքերի հրամանատար գնդ. Շատելվորտը, ապր. 3-ին, հրատարակեց հետևեալ յայտարարութիւնը.

«Անգլիական հրամանատարութիւնը յայտարարում է ի գործադրութիւն Շուշի, Զանգեզուր, Ջիբրայիլ և Ջիվանշիր գաւառների բովանդակ ազգաբնակութեան, որ՝ 1) Ադրբէջանի կառավարութեան 1919թ. յուն. 15 որոշումով դր. Սուլթանովը նշանակւած է Շուշի, Զանգեզուր, Ջիբրայիլ և Ջիվանշիր գաւառների ընդհանուր-նահանգապետ և վայելում է անգլիական հրամանատարութեան աջակցութիւնը: 2) Գոյութիւն ունեցող օրէնքների համաձայն, ամբողջ ազգաբնակութեան կարիքների գոհացման համար, ընդհ.-նահանգապետին կից կազմակերպւում է հայ ու մահմեդական վեց իրազեկ ներկայացուցիչներից մի խորհուրդ: 3) Անգլիական հրամանատարութեան ներկայացուցչի հանգամանքով կարող է խորհրդի մէջ մտնել անգլիական առաքելութեան սպաներից մէկը: 4) Ընդհ.-նահանգապետութեան սահմաններում ծառայող բոլոր պաշտօնեաների ռոճիկը և միւս ծախսերը հոգացւում են ադրբէջանեան դանձարանից: 5) Բոլոր վիճելի հարցերը իրենց վերջնական լուծումը կը ստանան Հաշտութեան Վեհաժողովում: 6) Ընդհ.-նահանգապետութեան սահմաններում կատարւող բոլոր զինւորական տեղափոխութիւնների մասին նախօրօք տեղեկացւում է անգլիական առաքելութեան: 7) Սոյն հաղորդագրութեամբ անգլիական հրամանատարութիւնը ուզում է մատնանշել, որ ընդհ.-նահանգապետի վրա դրւած պարտականութիւնների գործադրութիւնը՝ ի մասին ընդհ.-նահանգապետութեան մէջ կարգի և անդորրութեան պահպանման, ընդհ.-նահանգապետից և նրա մարմիններից բխող բոլոր հրամաններն ու կարգադրութիւնները պէտք է իրագործւեն առանց առարկութեան, և անգլիական հրամանատարութիւնը աջակցութիւն է ցոյց տալիս ձեռք առնւած բոլոր օրինական միջոցներին»:

Այս յայտարարութիւնը հանդիպեց Հայաստանի կառավարութեան և ղարաբաղցիների բուռն բողոքին ու դիմադրութեան: Հայաստանի արտ. գործ. նախարարը, ապր. 16-ին, բրիտանական կովկասեան հրամանատարութեան քաշեց հետևեալ հեռագիրը. «Ապր. 3-ին Բաքուի բրիտանական ուժերի հրամանատար գնդ. Շատելվորտի ստորագրութեամբ անգլիական զինւորական առաքելութեան կողմից յայտարարութիւն է տրւած, որով Շուշի, Զանգեզուր, Ջիբրայիլ, և Ջիվանշիր գաւառների ազգաբնակութիւնը պարտադրւում է «առանց հակաճառելու՝ կատարել» Ադրբէջանի կառավարութեան նշանակած ընդհանուր-նահանգապետ դր. Սուլթանովի և իր պաշ-